առկա գրերի մասին, որոնք և արտագրելով ներբերում է իր պատմագրքում: Ահա դրանցից մեկը. «Յիշեա՛ և զիս՝ զոր նուիրեցայց իսկապէս ըստ անուանս վերստին աստուածագործողին կամահաճոյ յարկիս. զոհն մասնատիպս՝ որոյ շնորհօքն բաւականացայց, աղաչեմ յանձն և յարանուն քեզ Հռիփսիմէ» (էջ 268–269):

Իսկ իր երկրի բարօրությամբ մտահոգ Դավրիժեցին մեծագույն հաճույքով է վկայագրում կատարվող տարաբնույթ շինարարությունները: Պատահական չէ, որ պատմագրքի «Վասն նորոգութեան անուանի վանօրէից եւ շինութեան բազմածախ եւ մեծավայելուչ եկեղեցաց» վերնագրով ԻԶ գլուխն ամբողջովին նվիրել է շինարարության վկայագրման: Այդ շինարարությունների վկայագրումները ինչ-որ իմաստով կարելի է հիմնարկումի զրույցներ համարել, որոնք կարող են դառնալ որոշ ավանդությունների հիմք: Սակայն հրաշապատում տարրը, որ ավանդությունների պարագային ժանրակազմիչ գործառույթ ունի, մեծ մասամբ բացակայում է: Դրա պատճառն այն է, որ Դավրիժեցին ներկայացնում է իր ապրած ժամանակաշրջանում կատարված շինարարություններ:

Ահա այսպիսի ժանրային ներկայություններով է հատկական Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը: